ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Սերոբ Անտինյան[*]

Ներածություն

Հայ ազգային ինքնության պահպանումը, սերունդներին հայեցի կրթելու և դաստիարակելու, պատմական ակունքներին հաղորդակից լինելու ձգտումը մշտապես եղել և մնում են մեր ժողովրդի ազգային հոգեկերտվածքի կարևորագույն բաղկացուցիչը: Դարեր շարունակ օտար տիրապետողների լծի տակ գտնվելը, ազգային ինքնության կորստի մշտական սպառնալիքը, ձուլման և ուծացման վտանգը հայոց գիտակցության մեջ առանձնահատուկ մոտեցում և վերաբերմունք են առաջ բերել հայապահպան կարևորագույն ինստիտուտի՝ Հայ ազգային դպրոցի հանդեպ:

Այդ է պատճառը, որ Սփյուռքի հայ գաղթօջախներում որպես հայապահպանության կարևորագույն օջախ մեծ տեղ և ուշադրություն է դարձվել ազգային դպրոցների ստեղծմանն ու կայացմանը: Պատմական բոլոր ժամանակներում, աշխարհասփյուռ հայկական գաղթօջախների առաջացմանը զուգահեռ, որպես գերակա խնդիր մշտապես դրվել են հայկական դպրոցների հիմնումը, դրանց կայացումն ու զարգացումը:

Ազգապահպան այս գործին իրենց մասնակցությունն են բերել Սփյուռքում ստեղծված և գործող բոլոր կառույցներն ու կազմակերպությունները՝ *հայկական ավանդական կուսակցությունները (ՀՅԴ, ՌԱԿ, ՍԴՀԿ), բարեսիրական կազմակերպությունները* (Հայկական բարեգործա-

[*] Համաշխարհային հայկական կոնգրեսի ծրագրերի համակարգող, ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի մագիստրոս:

կան ընդհանուր միություն, Հայ օգնության միություն), *կրթական-մշակութային կազմակերպությունները* (Համազգային հայ կրթական և մշակութային միություն՝ Համազգային, Թեքեյան մշակութային միություն և այլն), ինչպես նաև *հայրենակցական միությունները*:

Այս համատեքստում առանձնահատուկ կարևորվում են երեք *հայ եկեղեցիների՝ Հայ Առաքելական եկեղեցու, Հայ Կաթողիկե և Հայ Ավետարանական եկեղեցիների*՝ Սփյուռքում հայ կրթական գործում ունեցած պատմական դերն ու նշանակությունը: Դարեր շարունակ պետականության բացակայության պայմաններում հայ եկեղեցին, ստանձնելով պետական գործառույթներ, լինելով ազգի միասնության ու հավաքականության խորհրդանիշը, հայ ազգային ինքնության, ազգային արժեքների ու գաղափարների պահապանն ու կենսագործողը, իր վրա է վերցրել նաև հայապահպանության կրթական և դաստիարակչական գործը: Հայ եկեղեցիները Սփյուռքում հիմնել և կայացրել են ամենօրյա և կիրակնօրյա դպրոցների հսկայական ցանց, որոնց շնորհիվ հայեցի կրթվում ու դաստիարակվում են տասնյակ հազարավոր հայ երիտասարդներ:

Փորձենք հակիրճ ներկայացնել Սփյուռքի հայկական կառույցների դերը հայկական ամենօրյա դպրոցների ստեղծման գործում, հատկապես ավանդական Սփյուռքում՝ Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում:

Հայ ավանդական կուսակցությունները

Սփյուռքի համայնքներում, հատկապես նորաստեղծ գաղութներում, մեծ է եղել հայկական ավանդական կուսակցությունների՝ *Հայ Յեղափոխական Դաշնակցության, Ռամկավար-ազատական և Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցությունների* նշանակությունը: Լինելով հայ քաղաքական մտքի կրողներն ու կենսագործողները՝ կուսակցություններն իրենց գործունեությամբ մշտապես նպաստել են ազգային ինքնագիտակցության զարթոնքին, ազգային խնդիրներին ու հայոց պահանջատիրությանը հետամուտ լինելուն՝ գաղթօջախներում իրականացնելով ազգային նպատակների իմաստավորման, հայության միավորման, համախմբման գործառույթ: Ու թեև ավանդական կուսակցությունների միջև մշտապես գոյություն

ունեցող հակասություններին ու պայքարին, նրանց միջև ընթացող մրցակցությունը երբեմն բարենպաստ է անդրադարձել Սփյուռքում հայ դպրոցների ստեղծման ու կայացման գործի վրա:

Բնականաբար, այս պարագայում կրթօջախներում իրեն զգալ է տվել կուսակցական գաղափարախոսությունը: Սակայն այն երբևիցե չի կաշկանդել սփյուռքի հայկական ամենօրյա դպրոցների լուսավորչական, ազգաշահ ու հայապահպան գործունեությունը, որը նրանց հիմնական նպատակն ու առաքելությունն է: «Լիբանանը, հատկապես նրա մայրաքաղաք Բեյրութը,- գրում է Ս.Գասպարյանը,- սփյուռքահայ մտքի ու մշակույթի գլխավոր կենտրոններից մեկն է: Այստեղ ներկայացված են հայկական բոլոր քաղաքական կուսակցությունները, որոնք զգալի դեր են խաղում երկրի քաղաքական կյանքում: Ոչ մի տեղ քաղաքական հակամարտություններն ու պայքարը հայկական կուսակցությունների միջև այնքան ցայտուն ու ուժեղ չեն, ինչպես այստեղ: Ոչ մի տեղ հայ մամուլը, տարբեր ուղղությունների պատկանող հասարակական ու մշակութային կազմակերպություններն այնպիսի խայտաբղետ պատկեր չեն ներկայացնում, ինչպես այստեղ: Ու, թերևս, ոչ մի երկրում հայերը երկրի հասարակական ու քաղաքական կյանքում այնպիսի կարևոր դեր չեն խաղում, ինչպես այստեղ» [1]: Նմանատիպ պատկեր է տիրում նաև Սիրիայում՝ Հալեպ ու Դամասկոս քաղաքներում:

Մերձավոր Արևելքի երկրներից Լիբանանում ու Սիրիայում գործող հայկական ամենօրյա դպրոցների գերակշիռ մեծամասնությունը կազմող ազգային վարժարանները վայելում են Հայ Յեղափոխական Դաշնակցության հովանավորությունն ու աջակցությունը:

Թվով համեմատաբար ավելի քիչ դպրոցներ ունեն ՌԱԿ-ը և ՍԴՀԿ-ը: Կուսակցությունների գործունեության մեջ որոշակի տեղ են զբաղեցնում ազգային-մշակութային արժեքների պահպանմանն ու զարգացմանը նպաստող հարցերը: Նրանց անմիջական հովանավորությամբ ու աջակցությամբ Լիբանանում և Սիրիայում տեղի են ունենում բազմաբնույթ մշակութային ձեռնարկներ, որոնց մասնակցությամբ սփյուռքահայությունը պահպանում է ինքնությունը և հաղորդակցվում ազգային արժեքներին:

Հարկ է նշել, որ դպրոցների, ինչպես նաև կրթական ու մշակութային այլ կենտրոնների հնարավոր կուսակցականացումից խուսափելու, կրթական, ազգապահպան և համազգային նշանակության այլ խնդիրները նեղ կուսակցական և հատվածական շահերից ավելի վեր դասելու նպատակով կուսակցությունները ձեռնամուխ եղան տարբեր կրթամշակութային հաստատությունների ստեղծմանը, որոնք անկուսակցական հիմքերով կիրականացնեին հայ գաղթօջախներում իրենց կրթամշակութային առաքելությունը: Այդպիսի կառույցներից են Համազգային հայ կրթական և մշակութային միությունը՝ Համազգայինը (ՀՅԴ հովանու ներքո), Թեքեյան մշակութային միությունը (ՌԱԿ հովանու ներքո), «Նոր սերունդ» մշակութային միությունը (ՍԴՀԿ հովանու ներքո):

Կրթական-մշակութային կազմակերպությունները

Համազգային հայ կրթական և մշակութային միությունը (Համազգային) մշակութային-կրթական կազմակերպություն է, որը ստեղծվել է 1928թ. մայիսի 28-ին Կահիրեում (Եգիպտոս)՝ «Հայ կրթական և հրատարակչական համազգային ընկերություն» անունով: Հիմնադիրներից են անվանի հայ հասարակական-քաղաքական գործիչներ, գրողներ և մտավորականներ Համո Օհանջանյանը, Լևոն Շանթը, Նիկոլ Աղբալյանը և ուրիշներ: Գործում է Հայ Յեղափոխական Դաշնակցության հովանու ներքո:

Համազգայինի նպատակն էր «Հայ ժողովրդին կրթական մակարդակը բարձրացնել հայ լեզվով և հայ հոգիով»: 1990-ին ընդունված կանոնագրով նախատեսվում էր՝ «ա. սատարել հայ մշակույթի, հայ դպրության, հայ լեզվին և ընդհանրապես հայ հոգեկան և իմացական արժեքներու ճանաչման, զարգացման, տարածման և ժողովրդականացման՝ Հայաստանի և արտերկրի մեջ, բ. օժանդակել հայապահպանման ճիգերուն, ազգային նշանակություն ունեցող ավանդույթներու շարունակման և մշակութային նոր ավանդներու ստեղծման, գ. մշակութային ձեռնարկներով՝ ցուցահանդես, հանդիսություն, հրատարակություններ, հայը, հայությունն ու Հայ դատը ծանոթացնել հայ թե օտար հասարակության»:

Միությունը 1930-ին Բեյրութում բացել է Հայ ճեմարանը, որը 1948-ից կոչվում է *Համազգայինի Նշան Փալանճյան ճեմարան* [2]:

Համազգայինը Սփյուռքում հայագիտությունը զարգացնելու, հայոց լեզվի ու գրականության, հայոց պատմության ուսուցիչներ, նաև՝ խմբագիրներ և հանրային այլ գործիչներ պատրաստելու համար 1974-ին Բեյրութում հիմնել է *Հայագիտական բարձրագույն հիմնարկը:* Ֆրանսիայի Մարսել քաղաքում 1980-ին հիմնադրվել է Մարսելի կրթական կենտրոնը՝ մանկապարտեզով, նախակրթարանով, միջնակարգով և երկրորդականով: 1986-ին Սիդնեյում (Ավստրալիա) հիմնվել է *Համազգայինի Արշակ և Սոֆի Գոլստըն (Գալստյան) երկրորդական վարժարանը:*

Այս ամենօրյա վարժարաններից բացի, Միության մասնաճյուղերը պահում են նաև մեկօրյա դպրոցներ: 1990թ. Բեյրութում բացվել և մինչ այժմ գործում է *Մելանքթոն և Հայկ Արսլանեան ճեմարանը:*

Համազգայինի մեծ ձեռնարկումներից է Բեյրութում հիմնադրված Լևոն Շանթ մշակութային կենտրոնը, որի հարկի տակ գործում են մի շարք կրթամշակութային և արվեստի դպրոցներ՝ Թորոս Ռոսլին կերպարվեստի ակադեմիան, Բարսեղ Կանաչյան երաժշտանոցը, ինչպես նաև երգի և բալետի դպրոցները: Նույնանման մշակութային կենտրոն է գործում Հալեպում (Սիրիա). Արամ Մանուկյանի անունը կրող մշակութային կենտրոնում գործում են Բարսեղ Կանաչյան երաժշտանոցը, Սարյան կերպարվեստի ակադեմիան, Զավարյան թատերախումբը, «Զվարթնոց» երգի-պարի համույթը:

Գործելով ավելի քան 90 տարի՝ Համազգային հայ կրթական և մշակութային միությունն անգնահատելի գործունեություն է իրականացրել Սփյուռքի հայ կրթական և մշակութային կյանքում:

Թեքեյան մշակութային միությունը (ԹՄՄ) կրթական-մշակութային կազմակերպություն է: Հիմնվել է 1947-ին, Բեյրութում (Լիբանան): Կոչվել է արևմտահայ անվանի բանաստեղծ Վահան Թեքեյանի անունով: Գործում է Ռամկավար-ազատական կուսակցության հովանու ներքո:

Թեքեյան մշակութային միության նպատակն է «պահպանել հայ ժողովրդի մշակութային ժառանգությունը, ստեղծել դպրոցներ և ուսանել հայ լեզուն, պատմությունը, գրականությունը, կրոնը, արվեստներն ու գիտությու-

նը», ինչպես նաև «պատրաստել ազգային գործիչներ և օժանդակել ուսանողներին, որոնք կնվիրվեն հայագիտությանը»: Կազմակերպությունը, որին անդամագրվել են անվանի հայ գրողներ, երգահաններ, մշակութային գործիչներ և բազմաթիվ արվեստագետներ, սկսել է նյութապես և բարոյապես օժանդակել հայկական դպրոցներին, ուսուցիչներին և մշակույթի գործիչներին, ստեղծել պատանեկան, երիտասարդական, սկաուտական խմբեր, հրատարակել գրական-գեղարվեստական և գիտական գործեր:

Թեքեյան մշակութային միության անմիջական աջակցությամբ և հովանավորությամբ գործում են երկու հայկական դպրոցներ՝ *Բեյրութի Վահան Թեքեյան և Լոս Անջելեսի Արշակ Տիգրանյան* դպրոցները: Հայաստանում ԹՄՄ-ն ֆինանսավորում է *Վ.Թեքեյանի անունը կրող չորս դպրոց* ՝ Երևանում, Գյումրիում, Ստեփանավանում և Արագածոտնի մարզի Կարբի գյուղում:

Բարեգործական կազմակերպությունները

1906թ. ապրիլի 15-ին եգիպտահայ անվանի հասարակական, քաղաքական և պետական գործիչ Պողոս Նուբար փաշայի կողմից հիմնադրված *Հայ բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ)* հետզհետե ընդարձակեց գործունեությունը և 1940-1950-ականներին արդեն ձեռք բերեց համահայկական բովանդակություն:

ՀԲԸՄ կանոնադրության մեջ նշված է. «*Հարուստ, թե աղքատ, անուս, թե գիտուն, երթանք կանգնելու օջախը կործան, երթանք հիմնելու դպրոց-գործատուն, երթանք մշակին տալ ցանք ու լծկան*»: Հենց այս նպատակներին էր միտված ՀԲԸՄ ընդհանուր գործունեությունը մինչև 1930-ականների սկիզբը [3]:

1930-ականներին Բարեգործականի կենտրոնական վարչության որոշմամբ անհրաժեշտություն էր դիտվում բարեսիրական, կրթական, մշակութային ծրագրերի միջոցով պահպանել և տարածել հայ լեզուն, ինքնությունն ու ժառանգությունը: Դեռ 1918թ. Պորտ Սաիդ նավահանգստում ապաստանած գաղթականության համար ՀԲԸՄ-ը բացեց վարժարան՝ 1220 սաներով: Հետագայում էլ այդ գործունեությունը շարունակվեց: Ներ-

կայումս Բարեգործականն ունի 20 վարժարան, որոնց մոտ կեսը Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում՝ Լիբանանում, Սիրիայում և Իրանում:

ՀԲԸՄ ստեղծած և նրա հովանու տակ գործող կրթօջախներից կարելի է առանձնացնել՝ *Լիբանան* ՝ Լևոն Կ.Նազարյան վարժարան, Սահակյան Լևոն Մկրտիճյան քոլեջ, Դարուհի-Հովակիմյան երկրորդական վարժարան, Պողոս Գևորգ միջնակարգ Կարմիրյան վարժարան; *Սիրիա* ՝ Քարեն Եփփե ազգային ճեմարան, Գյուլլաբի Գյուլբենկյան Առաջապահ (Թալիա) վարժարան, Լազար Նաճարեան-Գալուստ Կիւլպենկեան նախակրթարան և երկրորդական վարժարան, *Իրան* ՝ Նվարդ Կյուլպենկյան նախակրթարան, Մարի Մանուկյան աղջկանց միջնակարգ և երկրորդական վարժարան, *Հունաստան, Աթենք* ՝ Արթաքի Գալփակյան նախակրթարան, *Ավստրալիա, Սիդնեյ* ՝ Ալեքսանդր նախակրթարան, *Կանադա* ՝ Ալեքս Մանուկյան նախակրթարան և միջնակարգ վարժարան, Դանիել և Ալիս Ծառուկյան նախակրթարան (Տորոնտո), *ԱՄՆ, Կալիֆոռնիա* ՝ Մանուկյան-Դեմիրճյան նախակրթարան և երկրորդական վարժարան, Փասադենայի երկրորդական վարժարան, *ԱՄՆ, Միչիգան* ՝ Ալեքս և Մարի Մանուկյան նախակրթարան և երկրորդական վարժարան, *Արգենտինա, Բուենոս Այրես* ՝ Մարի Մանուկյան նախակրթարան և երկրորդական վարժարան, *Ուրուգվայ, Մոնտեվիդեո* ՝ Նուպարյան-Մանուկյան նախակրթարան և երկրորդական վարժարան [4]:

Հայ օգնության միությունը (ՀՕՄ, ՀՅԴ Կարմիր Խաչ) ստեղծվել է 1910թ. Նյու Յորքում, ՀՅԴ գործիչ Ակնունու ջանքերով, որպես հայ կանանց բարեգործական համահայկական կազմակերպություն: Ստեղծման պահին ուներ մոտ 30 մասնաճյուղ ԱՄՆ-ում և Կանադայում: Սկզբնապես Հայ օգնության միության նպատակներն են եղել պատերազմների, բնական աղետների ժամանակ դրանցից տուժած հայերին աջակցելը, առողջապահական, սոցիալական օգնությունը կենտրոններում, ինչպես նաև սննդի բաշխման կետերի հիմնումը:

Հետագայում ՀՕՄ աշխատանքներում մեծ տեղ զբաղեցրեց կրթամշակութային գործունեությունը: Կազմակերպության մասնաճյուղերը սփյուռքահայ երիտասարդության ազգային ինքնության պահպանման, հայեցի

դաստիարակման նպատակով տարբեր երկրներում ձեռնամուխ եղան հայկական մեկօրյա, կիրակնօրյա և ամենօրյա դպրոցների հիմնադրմանը, սկսեցին աջակցել արժանավոր հայ ուսանողներին, հատկապես հայագիտության բնագավառում:

1927թ. Հայ օգնության միությունը (Հայ Կարմիր Խաչը) Աթենքում հիմնել է *Զավարյան վարժարանը,* 1930-ի փետրվարից՝ բացման առաջին իսկ օրվանից, սկսել է դրամական հատկացումներ անել Բեյրութի *Նշան Փալանճյան ճեմարանին,* մեծապես օժանդակել է 1947-ին Հալեպում հիմնված *Քարեն Եփփե ազգային ճեմարանին,* ինչպես նաև 1922-ից Բուլղարիայի Ֆիլիպպե (Պլովդիվ) քաղաքում, 1925-ից Սոֆիայում գործող *Մեսրոպյան ճեմարանին:* Հայ Կարմիր Խաչը ԱՄՆ տարբեր քաղաքներում բացել է նաև մեկօրյա հայկական դպրոցներ, սան-սանուհիների արծվիկների խմբեր, որոնք 1930-ականների կեսին դարձել են զորավար Գարեգին Նժդեհի հիմնած Ցեղակրոն շարժման կորիզը: 1970-ին՝ ՀՕՄ 60-ամյա հոբելյանի առթիվ կազմակերպված հանգանակությամբ Դեթրոյթում կառուցվել է *ՀՕՄ ամենօրյա վարժարանը:* 1979-ին հիմնվել են Տորոնտոյի *Գոլոյյան ամենօրյա վարժարանը* (Կանադա) և Պալայան մանկապարտեզը: Ներկայումս Աթենքում գործում է *Սոֆի և Լևոն Հակոբյան վարժարանը,* 1993-ից՝ նորակառույց Զավարյան կրթամշակութային և մարզական կենտրոնը: ՀՕՄ-ը կրթական ասպարեզում հատուկ կարևորում է մեկօրյա հայկական դպրոցներն ու մանկամսուր-մանկապարտեզները: 2000թ. տվյալներով՝ ՀՕՄ շուրջ 80 մեկօրյա դպրոցներ են գործել Ֆրանսիայում, Իրանում, Կանադայում, ԱՄՆ-ում (հատկապես՝ Կալիֆոռնիա նահանգում) և այլուր:

Հայ եկեղեցին

Անհնար է գերագնահատել Հայ եկեղեցու պատմական դերն ու նշանակությունը Հայոց պատմության մեջ ընդհանրապես և Հայ կրթական գործին բերած նվիրապետությանը՝ մասնավորապես:

Դարեր շարունակ, ապրելով այլադավան միջավայրում, այլակրոն ժողովուրդների մեջ, հայերն առավել ամուր են կապվել իրենց եկեղեցուն: Հենց եկեղեցու և հավատքի միջոցով են հայերը կարողացել օտար երկրնե-

ռում պահպանել հոգևոր կյանքի, մշակույթի ավանդները, իրենց գիրն ու գրականությունը, ազգային առանձնահատկությունները: Սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ բոլոր գաղթօջախներում, բոլոր ժամանակներում հայերի ամենաառաջին գործը եղել է հայկական եկեղեցու կառուցումը, որին, որպես տրամաբանական շարունակություն, հաջորդել է դպրոցաշինությունը: Հայկական դպրոցներ բացելու և նրանց գործունեությունն անխափան տանելու գործի հիմնական նախաձեռնողն ու կազմակերպողը եղել է հայկական եկեղեցին (առաքելական, կաթոլիկ, ավետարանական): Դա է վկայում այն փաստը, որ բոլոր հայկական առաջին դպրոցները բացվել են եկեղեցիներին կից և նրանց հովանավորությամբ: Սփյուռքում եկեղեցին ու դպրոցը կարծես միասնացած լինեն:

Այսօր էլ սփյուռքում հայ եկեղեցին, որի համապարփակ գործունեության մեջ վճռորոշ ու կարևոր տեղ ունի կրթական գործը, բացառիկ ուշադրության ու հոգածության տակ է պահում հայկական դպրոցները և բոլոր հարցերում աջակից դառնում նրանց [5]:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցին՝ հայ ժողովրդի ազգային եկեղեցին, պաշտոնապես հիմնադրվել է 301թ., Հայոց Տրդատ Գ թագավորի օրոք՝ Քրիստոնեությունը Մեծ Հայքի թագավորության պետական կրոն հռչակելով: Կենտրոնը՝ ՀՀ Վաղարշապատ քաղաքի Ս.Էջմիածնի վանքն է՝ Մայր աթոռ Ս.Էջմիածինը:

Իր հոգևոր առաքելությունն իրականացնելիս Հայ եկեղեցին դարեր շարունակ մասնակցել է նաև պետության ազգային, մշակութային, իրավական, տնտեսական և քաղաքական կյանքին, իսկ պետականության բացակայության և օտար տիրապետության պայմաններում ստանձնել է նաև պետական գործառույթներ, ներկայացրել ազգը և պաշտպանել նրա շահերը գերիշխան երկրների իշխանությունների մոտ:

Հայոց ցեղասպանությանը հաջորդած տարիներին, աշխարհասփյուռ հայ գաղթօջախներում, Հայ եկեղեցին շարունակել է իր ազգային-հոգևոր առաքելությունը հայրենազրկված արևմտահայության համախմբման գործում: Վիթխարի դեր կատարելով սփյուռքահայության համայնքների կազմակերպման և զարգացման բոլոր փուլերում՝ Հայ եկեղեցին գաղթաշխար-

հում հանդես է եկել որպես հայապահպանության, ազգային ինքնագիտակցության բարձրացման գլխավոր գործոն: Նրա հովանու տակ են ստեղծվել կամ նրա շուրջն են համախմբվել բազմաթիվ համայնքային կառույցներ, նրա անմիջական օժանդակությամբ և մասնակցությամբ բացվել են կիրակնօրյա և ամենօրյա բազմաթիվ դպրոցներ, վարժարաններ, ճեմարաններ:

Հայ Առաքելական եկեղեցու դպրոցաշեն և հայապահպան գործունեությունն առավել մեծ թափով սկսել է իրագործվել Մերձավոր Արևելքի երկրներում և հատկապես Լիբանանում ու Սիրիայում, որտեղ Մեծ եղեռնից հետո ապաստանել էին առավել մեծ թվով հայ գաղթականներ [6]:

Այսպես, հայ համայնքային կառույցներ ունեցող *Լիբանանում Հայ առաքելական համայնքն ունի դպրոցական իր ցանցը,* որը ճանաչվում է իբրև ազգային դպրոց: Ավելի քան 2000 աշակերտ Լիբանանի թեմի ազգային իշխանության անմիջական հովանավորությամբ ուսանում է ազգային վարժարաններում:

Ազգային վարժարանների նախագահի պաշտոնն իրականացնում է Լիբանանի թեմի առաջնորդ, գերաշնորհ Գեղամ եպիսկոպոս Խաչարյանը: Ազգային իշխանության ազգային ուսումնական և տնտեսական խորհուրդներն ուշադրության կենտրոնում են պահում ազգային վարժարանների կրթական, ծրագրային, նյութական գործունեությունը և համապատասխան ժողովներով, որոշումներով կարգավորում դրանց աշխատանքները:

Վարժարանները գործում են Ազգային Սահմանադրությունից բխած կանոնադրությամբ, որի համաձայն՝ հատուկ կարգով նշանակվում են վարժարանների տնօրենները և հատուկ հոգաբարձական կազմը, որոնք սերտորեն գործակցում են ի նպաստ վարժարանի ծրագրերի իրականացման: Ազգային վարժարանների հիմնական առաքելությունն է նորահաս սերնդին տալ հայեցի ուսում՝ մանկապարտեզից մինչև համալսարան, անկախ ծնողների նյութական հնարավորությունից:

Բեյրութի Բուրջ Համուդի Նոր Ադանա թաղամասի բնակիչները, իրենց ծննդավայրի՝ պատմական Ադանայի Աբգարեան վարժարանի հիշատակը հավերժացնելու համար, 1931-ին հիմնել են *Ազգային Աբգարեան վարժարանը,* որի առաջին տնօրենն էր Գրիգոր Բաղդասարյանը: Վարժարանի նշանաբանն է՝ «Լույսի օրրան, վաղվան զրահ»:

Կիլիկիայի սսեցի հայ գաղթականությունը 1931-ին հիմնել է *Ազգային Լուսինեան վարժարանը:* 1963-ին՝ պրն Աքսոր Գասարճյանի իշխանական նվիրատվությամբ, դպրոցը վերանորոգվել է: Այն վերանվանվել է նրա անունով՝ *Ազգային Աքսոր Գասարճեան վարժարան:* Լուսինեան-Գասարճեան վարժարանի առաջին տնօրենն էր Մատաքիա Սարգսյանը: Վարժարանի նշանաբանն է՝ «Աշխատանք, նվիրում»: Վարժարանը գործում է Բուրջ Համուդի Սիս թաղամասում:

Դարձյալ Բուրջ Համուդում, հատուկ հատկացված հողատարածքում ժողովրդական հանգանակությամբ և շինարարական աշխատանքներին ակտիվ մասնակցությամբ 1930-ին կառուցվել է վարժարան ու եկեղեցի, որոնք անվանակոչվել են Մարաշի եկեղեցու անունով՝ *Ս. Քառասնից Մանկանց վարժարան ու եկեղեցի:*

Տրիպոլիի Մինայի շրջանում 1922-ին Միհրան Խրիմյանի օրոք, հիմնվել է Խրիմեան վարժարանը, իսկ 1934-ին՝ Նուպարեան վարժարանը՝ արդեն քաղաքում: 1962-ին Տրիպոլիում գործող ազգային զույգ վարժարանները միավորվում են և կոչվում *Ազգային Նուպարեան-Խրիմեան վարժարան,* որի առաջին տնօրեններից էր Սեդրակ Աֆարյանը:

1935-ին Ազգային իշխանության որոշմամբ, Ռըմեյլի Ս.Հարություն եկեղեցու կողքին հիմնադրվում է *Ազգային Ռուբինեան վարժարանը:* Շրջանը մեծ մասամբ բնակեցված էր կիլիկեցի գաղթականներով, և վարժարանի անվանակոչումը պայմանավորվեց պատմական անցյալի հիշատակով: Վարժարանի նշանաբանն է՝ *«Միրե ազգդ, հայրենիքդ, լեզուդ»*:

Բեյրութի Սուրբ Նշան վարժարանն իբրև մանկապարտեզ հիմնադրվել է 1902-ին, այժմյան Ս.Նշան եկեղեցու հողատարածքի վրա: 1922-ին նաև ունեցել է նախակրթարանի բաժին: 1964-65-ին, նախկին Սուրբնշանական Սուրեն Խանամիրյանի բարերարությամբ այստեղ հաստատվում է *Ազգային Սուրէն Խանամիրեան քոլէջը:* Վարժարանը ներկայումս փոխադրվել է Բեյրութի Ֆանարի արվարձանը:

Ազգային բարերարներ Լևոն և Սոֆիա Հակոբյանների նվիրատվությամբ 1964-ին Բուրջ Համուդում կառուցվում է երկրորդական վարժարան, որը կոչվում է իր բարերարների անունով՝ *Ազգային Լեւոն և Սոֆիա Յակո-*

բեան քոլեջ: Քոլեջի առաջին տնօրենը Կարո Պետրոսյանն էր: Վարժարանի նշանաբանն է՝ «Աշխատանքը կազնվացնե»:

1986-ին Ազգային Սոֆիա Յակոբեան քոլեջն ունեցավ արվեստի իր բաժանմունքը, որը 1992-2002թթ. շարունակեց գործունեությունը՝ *Ազգային Էհրամեճեան վարժարանի* տարածքում՝ *«Ազգային Արհեստից» վարժարան* անունով: 2002-2003 ուսումնական տարեշրջանում դարձյալ սկսեց գործել Սոֆիա Յակոբեանի «Արվեստիցը», *L.A.T.C.* անունով: 2004-2005-ին այն վերանվանվեց «Լեւոն Սոֆիա Արուեստից վարժարան- *L.A.T.C.»:*

Ազգային Եղիշէ Մանուկեան վարժարանը հաստատվել է 1963-ին, Մարտիկեան դպրոց անունով, Անթիլիասի մայրավանքի տարածքում: 1984-85 ուսումնական տարեշրջանում վարժարանը փոխադրվել է Բեյրութի արվարձաններից Տպպայէ և անվանվել բարերար Վաչէ Մանուկյանի հոր՝ Եղիշե Մանուկյանի անունով: Դոկտոր Բաբկեն Փափազյանի և Մանուշակ Պոյաճյանի տնօրինության օրոք վարժարանը տվել է երկրորդականի իր առաջին շրջանավարտներին: Վարժարանի նշանաբանն է՝ *«Հավատք, կամք ու նվիրում»* [7]:

1941-ին Շավարշ Միսաքյանի ջանքերով և ֆրանսահայ գաղութի մասնակցությամբ հիմնադրվում է Այնճարի Ազգային Յառաջ վարժարանը, տնօրինությամբ Տեր Նարեկ Ավագ քահանա Շրիքյանի: 1969-ին՝ Գալուստ Կիւլպենկեան հիմնարկության բարերարությամբ, վարժարանում բացվում է երկրորդական բաժինը, և վարժարանը վերանվանվում է *Ազգային Յառաջ-Գալուստ Կիւլպէնկեան քոլեջ*՝ որպես առաջին տնօրեն ունենալով պրն Հովհաննես Գարագաչյանին: Վարժարանի նշանաբանն է՝ *«Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»*:

Հայ Առաքելական եկեղեցու ազգային առաջնորդարանների հովանու ներքո են գործում նաև Մերձավոր և Միջին Արևելքի հայկական այլ համայնքների բազմաթիվ կրթօջախներ՝ Եգիպտոսում, Սիրիայում, Իրանում, Թուրքիայում, Քուվեյթում և այլուր: Մասնավորապես՝

- *Եգիպտոսի Ազգային առաջնորդարան*՝ Նուբարյան (Կահիրե), Գալուստյան (Կահիրե), Պողոսյան (Ալեքսանդրիա) ազգային վարժարաններ,
- *Բերիո թեմի (Սիրիա) Ազգային առաջնորդարան*՝ Ազգային Սուրբ Նահատակաց վարժարան, Ազգային ուսումնասիրաց միացյալ վար-

ժարան, Ազգային Վերածնունդ վարժարան, Ազգային Նուպարյան վարժարան, Ազգային Խորենյան վարժարան, Ազգային Հայկազյան մանկապարտեզ, Ազգային նահատակաց վարժարան, Ազգային Մեսրոպյան վարժարան, Ազգային Եփրատ վարժարան, Ազգային Միացյալ Միջնակարգ Վարժարան, Ազգային Ազատություն վարժարան, Ազգային Սահակյան վարժարան, Ազգային Հայկազյան վարժարան, Մարաշի ազգային Մեսրոպյան վարժարան, Ազգային Զավարյան վարժարան, Ազգային միացյալ վարժարան, Քարեն Եփփե ազգային ճեմարան, Ազգային Գյուլբենկյան վարժարան:

- *Թեհրանի (Իրան) Հայոց թեմի առաջնորդարան՝* Յ.Թովմասեան օրիորդների միջնակարգ դպրոց, Արաքս դպրոց, Ալիք ոչ շահադիտական դպրոց, Արարատ դպրոց, Ա.Սողոմոնյան դպրոց, Շանթ դպրոց, Ռոստոմ օրիորդաց տարրական դպրոց, Ռոստոմ տղայոց տարրական դպրոց, Մարիամ օրիորդաց տարրական, ուղեցույց միջնակարգ դպրոց, Մարիամ կրթ. հաստատություն տղայոց տարրական ուղեցույց դպրոց, Սահակյան օրիորդաց դպրոց, Սահակյան տղայոց դպրոց, Նաիրի տղաների տարրական դպրոց, Նաիրի տղաների ուղեցույց դպրոց, Թունյան ուղեցույց դպրոց, Ն.Գյուլբենկյան դպրոց, Մարի Մանուկյան դպրոց, Թունյան ուղեցույց դպրոց:
- *Սպահանի (Իրան) Ազգային առաջնորդարան՝* Նոր Ջուղայի Հայոց ազգային «Արնեն» նախակրթարան, Նոր Ջուղայի Հայոց ազգային «Քանանեան» օրիորդաց ուղեցույց և միջնակարգ, Նոր Ջուղայի Հայոց ազգային «Կատարինեան» տղայոց ուղեցույց և միջնակարգ, Նոր Ջուղայի Հայոց ազգային «Արմեն» օրիորդաց և տղայոց տարրական, Շահինշահրի հայոց ազգային «Մասիս» ուղեցույց դպրոց, Շահինշահրի Հայոց ազգային «Նարեկ» մանկապարտեզ-նախակրթարան, Շահինշահրի Հայոց ազգային «Սրբոց վարդանանց» տարրական դպրոց:
- *Թավրիզի (Իրան) Ազգային առաջնորդարան՝* Մասիհա տարրական և ուղեցույց աղջկաց բաժին, Մասիհա ուղեցույց տղայոց բաժին, Թավրիզի Հայոց Ազգային Թամարեան-Սահակեան դպրոցներ:
- *Քուվեյթի Ազգային առաջնորդարան՝* Ազգային Կենտրոնական վարժարան:

Առանձնահատուկ արժե նշել *Թուրքիայում (Ստամբուլ)* գործող հայ դպրոցները: Առհասարակ, Պոլիսը դարեր շարունակ եղել է արևմտահայության հասարակական, քաղաքական, կրթական և մշակութային կենտրոն, իսկ պոլսահայությունը նշանակալից դեր է ունեցել թե՛ հայ համայնքային, թե՛, ընդհանրապես, Թուրքիայի հանրային-հասարակական կյանքում: Քաղաքական, տնտեսական, մշակութային, եկեղեցական, մարզական և արհեստագործական բազմաշնորհ և տարաբնույթ գործունեությամբ հայերը խոշոր ներդրում են ունեցել Օսմանյան կայսրությունում, մշտապես վայելել են մեծ համբավ: Ծաղկում է ապրել նաև կրթական գործը: Միայն Կ.Պոլսում դարասկզբին (1901թ.) կար 40 վարժարան: Մեծ եղեռնից հետո դրանց զգալի մասը փակվել է:

Ներկայումս Ստամբուլում գործում է *16 վարժարան,* որոնցից 5-ը՝ *Կեդրոնականը, Եսայանը, Ս.Խաչ դպրեվանքը, Սահակյան-Նունյանը, Վիեննական Մխիթարյանը* լիցեյներ են (քոլեջ):

Գործում են նաև *Պեզճյան, Տատյան, Մերամեթճյան, Արամյան-Ունճյան, Լևոնյան-Վարդուհյան, Թարգմանչաց, Ս.Սահակ-Ս.Մեսրոպ, Ներսեսյան-Եկմոնյան վարժարանները, Սեմերճյան ճեմարանը, Գալֆայան ճեմարան-վարժարանը, Կարագյոզյան որբանոցը* և այլն:

Պոլսի գրեթե բոլոր հայաշատ թաղամասերն ունեն երկրորդական կամ նախակրթական վարժարաններ՝ իրենց ծաղկոցներով: Վարժարաններում ուսուցանվում են հայոց լեզու, կրոնի պատմություն: Հայ ժողովրդի պատմության դասավանդումն արգելված է: Թուրքերենի, Թուրքիայի պատմության և աշխարհագրության ուսուցիչները պարտադիր թուրքեր են:

1740-ին Հալեպում հիմնված Հայ Կաթողիկե եկեղեցին Հռոմի կաթոլիկ եկեղեցու հետևորդ հայերի (եկեղեցական և աշխարհական) հավաքականություն է, որը միացած է Հռոմի աթոռին եկեղեցական և դավանաբանական հաղորդությամբ, ճանաչում և ընդունում է Հռոմի պապի գերագահությունը: Իր եկեղեցական թեմերով ու նվիրապետություններով սփռված լինելով աշխարհով մեկ՝ Հայ Կաթողիկե եկեղեցին անմասն չի մնացել հայ կրթական գործին նեցուկ լինելու, ամենուրեք հայկական դպրոցներ հիմնե-

լու, ազգային ինքնությունը պահպանելու նվիրական առաքելությանը: Ու թեև Հայ Առաքելական եկեղեցուց ունեցած դավանաբանական և ծիսական տարբերություններին, Հայ Կաթողիկե եկեղեցու հետևորդներն իրենց դպրոցաստեղծ հայապահպան ու հայրենանվեր գործում որպես ազգային ինքնության բաղկացուցիչ առավելապես շեշտադրում են հայոց լեզվի, գրականության, պատմության, մշակույթի ու արվեստի ուսուցման վրա: Ներկայումս գործում է Հայ կաթոլիկական երեք միաբանություն՝ Մխիթարյան միաբանությունը, Զմմառի Արծիվյան պատրիարքական միաբանությունը և Անարատ հղության հայ քույրերի միաբանությունը:

Հայ Կաթողիկե եկեղեցին և Մխիթարյան միաբանությունը կրթական գործունեություն են ծավալում Սփյուռքի բոլոր խոշոր համայնքներում: Այժմ այս եկեղեցու հովանու ներքո գործում է 44 դպրոց, որոնց մեծ մասը երկրորդական վարժարաններ են՝ շուրջ 35 հազ. աշակերտով: Անարատ հղության հայ քույրերը ևս ունեն իրենց դպրոցները և ընծայարանները: Կրթական կենտրոններից է *Վենետիկի Մուրատ-Ռաֆայելյան վարժարանը* (1998-ից, ցավոք, չի գործում)՝ հարուստ գրադարանով և թանգարանով: Մխիթարյանների տնօրինությամբ գործում են *Բուենոս Այրեսի, Հալեպի, Բեյրութի, Լոս Անջելեսի* Մխիթարյան վարժարանները: Կաթոլիկ հայ հոգևոր կադրերի պատրաստման բարձրագույն դպրոց է 1883-ին Հռոմում հիմնադրված և ցայսօր գործող *Լևոնյան վարժարանը:* Հայ Կաթողիկե եկեղեցուն պատկանող վարժարաններից են նաև՝

- Եգիպտոսի Հայ կաթոլիկների միություն՝ *Հայ կաթոլիկ քույրերի դպրոցը:*
- Լիբանանի Հայ Կաթողիկե Պատրիարքարանի՝ Զմմառեան Միաբանության Դպրեվանք, Զմմառեան Ս.Պողոս ճեմարան, Հայ Կաթողիկե Մեսրոպյան բարձրագույն վարժարան, Մխիթարյան երկրորդական երկսեռ վարժարան, Հայ Կաթողիկե Պատրիարքարանի Գևորգ Հարպոյան երկրորդական վարժարան, Անարատ հղության հայ քույրերի Ս.Ագնես վարժարան, Սրբոց Հռիփսիմյան բարձրագույն վարժարան-Անարատ հղության հայ քույրերի:

Հայ Ավետարանական եկեղեցին քրիստոնյա բողոքականության հետևորդների եկեղեցին է, որը որպես առանձին կրոնական համայնք կազմավորվել է 1846-ին Կ.Պոլսում: Այնտեղ էլ հետագայում այն թուրքական իշխանության կողմից ճանաչվել է իբրև Հայ Առաքելական եկեղեցուց անջատ ինքնուրույն կրոնական համայնք: Առաջին աշխարհամարտից առաջ Թուրքիայում, Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում արդեն գործում էին 137 կազմակերպված ավետարանական եկեղեցիներ, որոնց կից՝ 270 կիրակնօրյա դպրոց, 7 քոլեջ, 46 բարձրագույն վարժարան, 3 աստվածաբանական ճեմարան: Եկեղեցու հետևորդների թիվն անցնում էր 50 հազարը:

Կարևորելով ազգային ինքնության պահպանումը, կրթությունը և դաստիարակությունը համարելով ազգի գոյատևման առաջնային նախապայման՝ հայ ավետարանականները, ստեղծման պահից, նույնպես ձեռնամուխ են եղել ազգային դպրոցների հիմնադրմանը, կայացմանն ու զարգացմանը: Հայ Ավետարանական եկեղեցին հիմնել է հարյուրավոր նախակրթարաններ, երկրորդական վարժարաններ, քոլեջներ, դպրոցներ: Հիշատակման և գնահատանքի է արժանի այն փաստը, որ ավետարանական հաստատություններում գիտական և մասնագիտական կրթություն են ստանում ցանկացող բոլոր հայերը՝ առանց կրոնական և դավանական խտրության: Երկրորդական վարժարանների թիվը 1908-ին 35 էր, որոնցից 20-ը՝ աղջիկների:

Ներկայումս գործում են 16 հայ ավետարանական կրթական հաստատություններ (նախակրթարանից մինչև բարձրագույն): Դրանցից 7-ը գործում են *Լիբանանում,* 5-ը՝ *Սիրիայում,* մեկական՝ Հայաստանում, Հունաստանում, Իրանում և ԱՄՆ-ում:

Նշանավոր են Մերձավոր Արևելքի Աստվածաբանական դպրոցը (Բեյրութ), Հայ Ավետարանական նահատակաց միացյալ վարժարանը և Հալեպ քոլեջը (Սիրիա), Հայ Ավետարանական եկեղեցու Գոհար դպրոցը (Իրան):

Լիբանանում ներկայումս կան 7 Հայ ավետարանական վարժարաններ: Դրանք հիմնվել են Կիլիկիայի ջարդերի հետևանքով այստեղ ապաստանած հայերի կողմից: Բոլոր դպրոցները պատկանում են եկեղեցիներին և նրանց հովանավոր միությանը՝ Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանա-

կան եկեղեցիների միությանը: Դպրոցները կառուցված են եկեղեցիների կողքին: Հովանավոր միությունն ունի իր կրթական խորհուրդը: Զուգահեռ գործում է նաև կրթական համադրող հանձնախումբը, որի կազմում են դպրոցների տնօրեններն ու կրթական խորհրդի անդամները:

Միությանը պատկանող վարժարաններն են՝ *Հայ ավետարանական Եփրեմ-Մարաթ Փիլիպոսեան քոլեջը* (Բեյրութ)՝ հիմնված իբրև երկրորդական վարժարան 1923-ին: Այս դպրոցը հետեղեռնյան հայ սփյուռքի առաջին երկրորդական վարժարանն է, *Հայ ավետարանական Կեդրոնական բարձրագույն վարժարան* (Էշրեֆիե թաղամաս, Բեյրութ)՝ հիմնված իբրև նախակրթարան, հետագայում վերածվել է երկրորդական վարժարանի, *Այնճարի Հայ ավետարանական Շամալեան-Թաթիկեան Երկրորդական վարժարան* (Բուրջ Համուդ)՝ հիմնված 1930-ին, իբրև նախակրթարան, հետագայում նույնպես վերածվել է երկրորդական վարժարանի, *Այնճարի Հայ ավետարանական երկրորդական վարժարան* ՝հիմնված 1939-ին իբրև նախակրթարան, այնուհետև վերածվել է երկրորդական վարժարանի, *Փիթըր Էլիզաբէթ Հայ ավետարանական միջնակարգ վարժարան* (Ամանոս թաղամաս, Բեյրութ)՝ հիմնված 1951-ին, դարձյալ իբրև մանկապարտեզ և հետագայում վերածված միջնակարգ վարժարանի: *Հայ ավետարանական Կերթմենեան վարժարան* (Նոր Հաճըն)՝ հիմնված 1931-ին, իբր նախակրթարան, *Թրատի Հայ ավետարանական վարժարան* (Թրատ թաղամաս, Բուրջ Համուդ)՝ հիմնված 1936-ին, իբր նախակրթարան:

Երկրորդական վարժարաններն ունեն մանկապարտեզ, նախակրթարան և երկրորդական: Յուրաքանչյուրի (մանկապարտեզ, նախակրթարան և երկրորդական) ավարտին ուսումնական ծրագիրը հաջողությամբ ավարտած աշակերտներն ստանում են դպրոցի վկայական:

Միությունը հովանավորում է նաև *Հայկազեան Համալսարանը,* որ հիմնվել է 1995-ին և 1996-ին վերածվել է պետականորեն ճանաչված համալսարանի: Այն Սփյուռքի հայկական միակ բարձրագույն ուսումնական հաստատությունն է:

Ամփոփելով Հայ եկեղեցու դերն ու նշանակությունը Սփյուռքի հայահոծ համայնքներում՝ կարելի է փաստել.

- Հայկական եկեղեցին Սփյուռքի գաղութներում, հիրավի, կատարել է պետության դեր՝ իր շուրջն է հավաքել տարագիր հայությանը և օգնել կազմակերպելու նրանց կյանքն օտարության մեջ:
- Եկեղեցին սփյուռքում իրականացրել է ոչ միայն կրոնական, հոգևոր քարոզչություն և գործունեություն, այլև համապարփակ գործառույթներ, որոնք ընդգրկել են համայնքների բոլոր ոլորտները՝ կրթական, մշակութային, սոցիալական, տնտեսական, հրատարակչական, թարգմանչական-մատենագիտական, նույնիսկ դատական և այլն: Սրանք այն հիմնական ոլորտներն են, որոնց հարցերով զբաղվում է ցանկացած պետություն և իշխանություն: Իսկ պետականություն չունեցող սփյուռքահայության համար այդ դերը ստանձնել է Հայկական եկեղեցին:
- Ե՛վ Հայ Առաքելական, և՛ Հայ Կաթոլիկ, և՛ Հայ Ավետարանական եկեղեցիներն իրենց համապարփակ գործունեության մեջ առանձնակի ուշադրություն են դարձնում կրթական հարցերին, դպրոցների գործունեությանը: Սրա վառ ապացույցն այն է, որ և՛ Լիբանանում, և՛ Սիրիայում առաջին հայկական ամենօրյա դպրոցները բացվել են եկեղեցիներին կից և նրանց օժանդակությամբ:

Հայրենակցական միությունները

Հայրենակցական միությունները՝ որպես հայրենիքից և բնօրրանից (նույն գյուղից, քաղաքից, գավառից) արտագաղթած համերկրացի հայերին միավորող կազմակերպություններ, առաջին անգամ սկսեցին ի հայտ գալ 19-րդ դարի առաջին կեսին Կ.Պոլսում: Այդ ժամանակ հայտնի էին վանեցիների, կարնեցիների, սեբաստացիների, այնթապցիների, արաբկիրցիների հիմնած միությունները՝ «ուսումնասիրաց», «կրթասիրաց», «որբախնամ», «աղքատախնամ» և այլ անվանումներով, որոնք, միջոցներ տրամադրելով ծննդավայրի վարժարանին կամ կառուցելով նոր դպրոցներ, վարժարաններ, ընթերցարաններ, խնամքի տակ առնելով որբ երեխաներին, նպաստել են նրանց կրթական և մշակութային մակարդակի զարգացմանը, կարևոր դեր կատարել հայրենակիցների (բառի նեղ իմաստով) ազգային ինքնագիտակցության պահպանման գործում [2]:

Հայրենակցական միությունների գործունեության հիմնական նպատակն իրենց ծննդավայրի, բնօրրանի ապրելակերպը, կենցաղը, ավանդույթներն ու սովորույթները, երգն ու պարը, բարբառը մոռացությունից փրկելն ու երիտասարդ սերունդներին փոխանցելն էր, որը նրանց մեջ միշտ արթուն կպահի ազգային էությունն ու ինքնագիտակցությունը: Եվ այս նպատակին հասնելու համար հայրենակցական միությունները, հատկապես Լիբանանում և Սիրիայում, իրականացրել են կրթամշակութային լայն գործունեություն՝ բացելով դպրոցներ, մշակութային օջախներ, կազմակերպելով տարաբնույթ գրական, մշակութային և կրթական միջոցառումներ, դասախոսություններ, համերգներ, գրական երեկոներ, ցուցահանդեսներ, ճաշկերույթներ՝ ազգային ճաշատեսակներով, ուղևորություններ պատմական վայրեր, հայ նշանավոր մտավորականների և արվեստի գործիչների հետ հանդիպումներ և այլն:

Հարկ է նշել, որ ցեղասպանությունից և խոշոր բռնագաղթերից հետո նորակազմ հայ գաղթօջախներում, երբ բարեգործական, կրթական, մշակութային կազմակերպությունները տակավին ձևավորված չէին, չկային հասարակական-քաղաքական կառույցներ, իսկ եկեղեցին դեռևս անկարող էր լիարժեք գործել, հենց *հայրենակցական միություններն են սկզբնապես հանդես եկել որպես գաղթօջախը միավորող, աշխարհագրական և տեղային (հայրենական), լեզվական-մշակութային, բարբառային, ծիսական-առվորութային ընդհանրության վրա հիմնված կարևորագույն ինստիտուտներ, որոնց շուրջը ձևավորվել են համայնքների առաջին նախատիպերը:*

«Մինչև 1920-ական թթ. վերջերը,- գրում է Հ. Թոփուզյանը,- Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների մշակութային կյանքի առանցքը կազմում էին Այնթապի, Մարաշի, Ադանայի, Խարբերդի, Թոմարզայի, Մալաթիայի, Արաբկիրի, Երզնկայի, Սեբաստիայի, Յոզկաթի, Ուրֆայի, Զեյթունի և այլ՝ ավելի քան երեսուն հայրենակցական միություններ: Ինչպես Հալեպում, այնպես էլ Բեյրութում ստեղծվել էր միջհայրենակցական վարչություն: Հայրենակցական միություններն այնքան էին ճյուղավորված և այնպիսի ուժ էին ներկայացնում, որ հնարավոր չէր նրանց շրջանցել Սիրիայի և Լիբանանի գաղթականության վերաբերվող այս կամ այն կարևոր հարցը լուծելիս» [8]:

«Ազդակ» օրաթերթը գրում է. «1918-1922թթ. լիբանանահայ ազգային կյանքի գործոնները հայրենակցական միություններն էին ընդհանրապես, երբ տակավին զանազան մշակութային կազմակերպություններ գոյություն չունեին և կուսակցություններն ալ գրեթե անկազմակերպ վիճակի մեջ էին» [9]:

Հայրենակցական միություններից յուրաքանչյուրը, հատկապես գործունեության սկզբնական շրջանում, ունեցել է հայապահպան զգալի դեր և նշանակություն. պահպանելով իր տեղային սովորույթները, ծեսերը, բարբառը՝ նպաստել է համայնքի ազգային և գավառային նկարագրի պահպանմանը: Կապը հայրենիքի հետ, որ սկզբից ի վեր ընկած է եղել հայրենակցականների գործունեության հիմքում, ուծացման գործընթացը կասեցնող ամենակարևոր գործոնն է:

Միություններից շատերը հրատարակել են պատմագրքեր, հուշամատյաններ, որոնք մանրամասն տեղեկություններ են տալիս տվյալ գավառի աշխարհագրության, ազգագրական նկարագրի, պատմական իրադարձությունների, քաղաքական, հասարակական, մշակութային կյանքի, ինքնապաշտպանական հերոսամարտերի մասին և այլն:

Ամփոփում

Կրթությունը ոչ միայն մարդու զարգացման, այլև ազգային գոյատևման, ինքնության և մարդկային առաջընթացի գրավականն է: Այն հիմնաքար է անձի ձևավորման և ուղենիշ տվյալ հասարակության զարգացման գործընթացում: Ճշմարիտ է այն միտքը, թե կրթությունն ու մշակույթն են պահում ու զարգացնում ժողովրդի ազգային ոգին, ստեղծված մշակութային արժեքներով է հարուստ յուրաքանչյուր ազգ ու ժողովուրդ:

Տարբեր ժամանակաշրջաններում զարգացման տարբեր փուլեր անցնելով, տարաբնույթ դժվարություններ հաղթահարելով, եկեղեցու, հասարակական-քաղաքական կազմակերպությունների, մշակութային, բարեսիրական, հայրենակցական միությունների, անհատ բարերարների և ամբողջ համայնքի մեծ ու անգնահատելի աջակցությունն ու օգնությունը ստանալով՝ հայկական դպրոցները կարողացել են գոյատևել ու զարգա-

նալ՝ հավատարիմ մնալով իրենց առաքելությանը՝ հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանմանը և զարգացմանը՝ հայապահպանությանը:

Լեզուն և մշակույթը երկար դարեր պետականություն չունեցող ժողովրդի համար ազգի գոյապահպանման կարևոր գործոններից են: Հայ ժողովուրդն իր լեզվի, հավատքի և մշակույթի պահպանմամբ կարողացավ գոյատևել, պահպանել իր ինքնությունը և մյուս ազգերի հետ միասին մուտք գործել 21-րդ դար:

Հունիս, 2011թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Գասպարյան Ս.,* Սփյուռքահայ գաղթօջախները այսօր, Երևան, 1962:
2. «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003:
3. *Եղիազարյան Ա.,* Սփյուռքի հասարակական-քաղաքական կազմակերպությունները, բարեգործական, կրթամշակութային, հայրենակցական միությունները (դասախոսության նյութ ԵՊՀ Սփյուռքագիտության ամբիոնում), Երևան, 2009:
4. *Մելքոնյան Էդ.,* Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Երևան, 2005:
5. Հայ կրթական գործը Սփյուռքում, Տաթև գիտակրթական համալիր, «Մանկավարժական միտք», Երևան, 2008:
6. *Բարխուդարյան Վ.,* Էջեր հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1996:
7. *Հարությունյան Ն.,* Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցները, Երևան, 2002:
8. *Թոփուզյան Հ.,* Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, Երևան, 1986:
9. «Ազդակ» հանդես, Պեյրութ, 6 ապրիլի, 1927:

РОЛЬ АРМЯНСКИХ ОРГАНИЗАЦИЙ, ОБЪЕДИНЕНИЙ ДИАСПОРЫ И АРМЯНСКОЙ ЦЕРКВИ В СОЗДАНИИ И РАЗВТИИ АРМЯНСКИХ ШКОЛ

Сероб Антинян

Резюме

Образование – залог не только развития человека, но и национального бытия, идентичности и человеческого прогресса. Это краеугольный камень в процессе формирования личности и веха в развитии данного общества. Именно образование и культура сохраняют и развивают национальный дух народа, каждая нация и народ богаты созданными ими культурными ценностями.

Проходя в разные периоды времени различные этапы развития, преодолев многообразные трудности, получая огромную и неоценимую помощь общественно-политических организаций, культурных, благотворительных, земляческих объединений, отдельных меценатов и всей общины, армянские школы смогли выжить и развиваться, оставаясь верными своей миссии – сохранению и развитию армянской национальной идентичности, *армяносохранению*.